դիւղին, Ցոյնք, Լատինք ընդ որս և Հայք. եւ մեկնեալ անտի եկին յԵրուսաղէմ, և պատմեցին զամենայն զոր արարին և զոր ինչ պարգեւեաց Տէր ազգին Հայոց, որք են, հիւսիսային մասն եկեղեցւոյն, բանալի դրան ընկերովի ընդ Ցոյնս. 10 կանթեղ, 2 պատկեր, 1 աշտանակ յԱյրին, և աւել ածել անդ. 1 կանթեղ և 1 պատկեր 'ի վերայ հիւսիսային դրան Այրին. բացայայտ ծանուցումն բաժանորդութեան Այրին. խսպառ բարձումն կուսպին 'ի փայտեայ դրանէ (1813. 'ի 13 Նոյեմբերի)։

ԳԼՈՒԽ ԼԵ.

Բաժանումն եկեղեցւոյն Ս. Աստուածածնի։ Կարգագրութիւն զարդուց և պատարագի և աւել ածութեան և այլ ամենայն իրաց հաւասար Ցունաց։ Բանք կարգագրութեան Պատարագին. Այրին և այլ սպասուց։ Խռովութիւն 'ի մէջ միաբանաց և ուխտաւորաց։ Պատասխանի թղթոյն Պոլսոյ։

Զկնի անցանելոյ աւուրց ինչ՝ չոքան Դատաւորք եւ բազմութիւն այլազգեաց 'ի ձորն Գեթսէմանի, ուր է եկեղեցին և դերեզմանն Ս. Աստուածածնի. գնացին և գլխաւորք Հայոց եւ Ցունաց։ Բազմեցան յեկեղեցւոջ անդ կատարել եւ զգործ բաժանորդութեան նորին, Դատաւորն ետ գրել զսեփհականութիւնս Հայոց և Ցունաց, եւ տեսին զի ամենայն ինչ յատկացեալ էր Ցունաց, և սակաւ ինչ Հայոց. ապա եկ Դատաւորն ինքնին չրջիլ տեսանել զտեղիսն, և ապա ըստ պատշաճի տնօրինել. եմուտ նախ 'ի սենեակն Ցունաց 'ի կողմն Հիւսիսոյ 'ի վերայ աստիճանաց, և յատկացոյց զայն միայն Ցունաց, եւ ապա 'ի սենեակն Հարաւային Ցարեւմուտս 'ի ներքոյ աստիճանաց, որ ընկերովի էր Հայոց և Ցունաց, և յատկացոյց զայն միայն Հայոց, հրամայեաց բառնալ անտի ըզկարասիս Ցունաց։ Գնացին 'ի դուռն Գերեզմանին, յայտ արարին Հայք զառաջին սովորութիւնս և զիրաւունս իւրեանց զոր ունէին։ Սակայն Դատաւորն ասա եւս կամեցաւ վարիլ նենգութեամբ եւ վնասել զՀայս, որպէս արար 'ի